

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ԽԵԼԱՑԻ ԽՕՄԻՏԻ ՈՒ ԶՈՒՄԱՐՃԱԼԻ ԴԻՊՈՒՍԿՆԵՐ

Տեղադրութիւն :

Պատարարս կ'ըսէր թէ հետաքրքիր մարդուն ականջները սրուակի՝ կընամանին . որչափ գէշ հիւլթ որ ըլլայ՝ կը ծծեն կ'առնեն :

Սոսք հայրենասէր :

Սենաժ կի՞ Սենագիոս անունով գաղղիացի մատենագիրը գիրք մը ունի որ մէջը հին Փարիզացուոց մէկ քանի անխելքութիւնները կը պատմէ : Ըն գիրքը տպողը , որ յուրնէլ կ'ըսուի եղեր , յանձն չառնէր . « Ըստուած չընէ որ ես իմ քաղաքակցացս պակտութիւնները տպեմ » կ'ըսէ : Ըն ատեն Սենաժ հետագայ ոտանաւորը կը շինէ .

Ես իմըս տըպագիր ,
Շուունդ Փարիզոյ հարազատ ,
Բաւ ինձ ասէ մեղագիր
Կալ քաղաքիս իմ ազատ .
Ոչ կամեցաւ տալ 'ի տիպ
Օքարս հայրենեացնը զշամբուշ .
Յայտ է ահա և սովիմք
Թիէ և յուրնէլ է ապուշ :

Ըրդարութիւն և խաղաղութիւն :

Սէկը կը տեսնէ որ սրահի մը մէջ սիրուն արձան մը կայ՝ այնպէս ձեւացուցած որ իբր թէ Ըրդարութիւնն ու խաղաղութիւնը իրար կը համբուրեն . կը դառնայ կ'ըսէ քովի բարեկամին . « Ընչ կ'ըսես . ինձի կ'երեւնայ թէ ան օրերուն հասեր ենք որ աս երկուքը ետքի բարեւը կուտան իրարու » :

1 համոմի շիշի :

Գիրք հարդալ :

Սէկը կ'ըսէր թէ գիտես ինչ է պատճառն որ շատ մարդ գիրք փոխ կ'առնէ ու քիչ մարդ ետ կը դարձընէ . — Ս ասն զի աւելի դիւրին է գիրքը պահել , քան թէ գրքին մէջինը :

Երանանք :

Սեւինէն տիկինը կ'ըսէ եղեր . « Ըս մենեին չեմ սիրեր ան ժամացոյցները որ ըրուակէ՝ ալ կը ցուցընեն . վասն զի անոնք մարդուս կեանքը խիստ մանր կը ջարդեն » :

Շարք ապրելու յոյս :

Գեղացի պառաւին մէկը քաղաք կ'երթայ ու ագուաւ մը կը գնէ : Աջ հարցընէ քովինը թէ ատ ագուաւը ինչ պիտի ընես : « Հոգի , կ'ըսէ պառաւը . երկիս կը զուրցէ թէ ագուաւը իրեք հարիւր տարի կ'ապրի . պիտի փորձեմ տեսնեմ՝ իրաւ է թէ չէ » :

Սիւմարի յետոյ իմ փեմեր :

Փարիզու տնկաբանական պարտեզին վերակացուն մէկ անգամ մը երկու հատ նոր թուզ կուտայ իր ծառաներէն մէկուն որ Պիլֆոնին ընծայ տանի : Ղամբան խեղճ ծառան թուզերուն աղուորութեանը չգիմանար , մէկ հատը կ'ուտէ : Պիլֆոն վերակացուն թղթէն իմանալով թէ երկուք պիտի ըլլան թուզերը , կը հարցընէ ծառային թէ՞ « Ս'ըր է մէկալ թուզը » : — « Սէկալը կերայ , պարոն » կ'ըսէ բարեմիտ ծառան՝ կարմրելով : — Ընչպէս , կ'ըսէ Պիլֆոն զարմանալով մը : Ըն միամիտը մէկալ թուզն ալ բերանը կը ձգէ , ու « Ըսպէս ըրի , պարոն » ըսելով՝ ան ալ ներս կը խաւրէ :

1 Ստիլի :